ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2021/40

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երքաղլույս» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Կատյա Նազարեթյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝

«Երքաղլույս» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Մինասյանի, Ա. Անանյանի,

«Կատյա Նազարեթյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Ա. Հարությունյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, լուսատեխնիկական ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Կատյա Նազարեթյան» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 17.05.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել պատվիրատուին «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով ապրանքների ձեռքբերման համար սահմանված տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություններ՝ մեծացնել 800Վտ լուսարձակի քաշը և արտաքին չափերը, արտաքին տեսքի ձևը, մասնավորապես կլորավուն լինելու հիմնավորում և մատրիցաների ու լուսադիոտների քանակական սահմանափակումների վերացում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 17.05.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 19.05.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/7955-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 21.05.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

21.05.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/40 համարի ծածկագիրը:

27.05.2021թ.-ին և 04.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 27.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.06.2021թ.-ին:

2. **<u>«Կատյա Նազարեթյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Կատյա Նազարեթյան» Ա/Ձ-ն 17.05.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«17.05.2021 թվականին ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/15 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ բողոքը վերադարձվել է 19.05.2021 թվականին: Արձանագրված թերությունները շտկելու համար սահմանվել է ժամկետ՝ երկու աշխատաքային օր:

Ձեզ ենք ներկայացնում բողոքի շտկված տարբերակը:

12.05.2021 թվականին <Երքաղլույս> ՓԲԸ-ի կարիքների համար լուսատեխնիկական ապրանքների /2 չափաբաժին/ մատակարարման ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/15 ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունն և հրավերը հրապարակվել է Gnumner.am կայքում:

Մասնավորապես գնման ընթացակարգի շրջանակներում 1-ին /Լուսարձակ LED 800 վատտ հեռահար լույսով/ և 2-րդ /Լուսարձակ LED 400 վատտ հեռահար լույսով/ չափաբաժինների ձեռքբերման համար տեխնիկական բնութագրերով սահմանված է ինչպես 800 Վտ, այնպես էլ 400 Վտ լուսարձակների առավելագույն քաշը 10 կգ: Բնութագրերով սահմանված է 800 Վտ լուսարձակի համար իրանի առավելագույն երկարությունը 530 մմ, առավելագույն լայնությունը 530 մմ, առավելագույն բարձրությունը 530 մմ, իսկ 400 Վտ լուսարձակի համար իրանի առավելագույն երկարությունը 400 մմ, առավելագույն լայնությունը 400 մմ, առավելագույն բարձրությունը 400 մմ արտաքին տեսքը՝ կլորավուն, ինչպես նաև սահմանված է,, որ համապատասխանաբար օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է առնվազն 600 հատ լոաադիոդներից, գունային ջերմաստիճանը 6500 Կելվին, ոչ պակաս 64000 լյումեն, իսկ 400 Վտ լուսարձակի տեխնիկական բնութագրով՝ 350 հատ լոաադիոդներով, գունային ջերմաստիճանը 6500 Կելվին, ոչ պակաս 32000 լյումեն:

800 Վտ լուսարձակը 2 անգամ մեծ է 400 Վտ լուսարձակից, հետևաբար բնութագրերով սահմանված բոլոր չափանիշները պետք է լինել այդ համամասնությամբ: 800 Վտ և 400 Վտ լուսարձակների առավելագույն քաշեր սահմանված են նույն 10 կգ, այնինչ 800 Վտ ավելի հզոր է և ավելի տարողունակ:

800 Վտ լուսարձակի համար նախատեսված է օպտիկական բլոկ, այն պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, իսկ մատրիցան հավաքված պետք է լինի առնվազն 600 հատ լոաադիոդներից: Նույն կերպ սահմանված է 400Վտ լուսարձակի դեպքում, երբ օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայի, իսկ այս դեպքում էլ մատրիցան հավաքված պետք է լինի 350 հատ լոաադիոդներից: Եթե 1 մատրիցան պետք է հավաքված լինի 350 հատ լոաադիոտներից, այդ դեպքում 600 հատ լուսադիոտների հավաքման համար մեկ մատրիցայով չի կարող լինել:

Արտաքին տեսքի կլորավուն լինելը և նշված չափերը ավելի շատ համապատասխանում են քառակուսի տեսք ունեցող լուսարձակներին: Իսկ ուղղանկյունաձև կամ քառակուսի լուսարձակները ունեն մի շարք առավելություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն. Սույն օրենքը կարգավորում է պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և

ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է.

Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

Օրենքի 7-րդ հոդվածով՝ Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես նաև 13-րդ հոդվածի համաձայն.

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին,

ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

ՀՀ կառավարության 04.05.2017 թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ Կարգ/ 22-րդ կետի Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանք պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքում:

Նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հաշվի առնելով վերը թվարկվածը, ինչպես նաև շուկայում կատարված ռաումնասիրությունները կարելի է փաստել, որ բնութագրերում կան թերություններ և մասնակիցների լիարժեք մասնակցության սահամնափակումներ, իսկ գնման ընթացակարգը իրականացվում է մրցակցային և թափանցիկ կանոնների խախտմամբ:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել պատվիրատուին «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով ապրանքների ձեռքբերման համար սահմանված տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություններ՝ մեծացնել 800Վտ լուսարձակի քաշը և արտաքին չափերը, արտաքին տեսքի ձևը, մասնավորապես կլորավուն լինելու հիմնավորում և մատրիցաների ու լուսադիոտների քանակական սահմանափակումների վերացում:

3. <u>«Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.05.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/8181-2021 գրությամբ դիմել է «Երքաղլույս» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Կատյա Նազարեթյան» Ա/Ձ-ի կողմից 17.05.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 25.05.2021թ.-ին թիվ 67/731 գրությամբ ներկայացրել է «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և բողոքի վերաբերյալ Պատվիրատուի դիրքորոշումը՝ հայտնելով հետևյալը.

«1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի Լ. Օհանյանի էլեկտրոնային փոստից 21.05.2021թ.-ին, ժամը 17.57-ին հայտարարություն-ծանուցում է ուղարկվել ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/15 գնանշման ընթացակարգի գնումների համակարգող Ա. Մինասյանի էլեկտրոնային փոստին, այն մասին, որ Կատյա Նազարեթյան անհատ ձեռնարկատերի կողմից ներկայացվել է բողոք, այն է նշված ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնի Լուսարձակ ԼԵԴ 800 վտ, հեռահար լույսով ապրանքի տեխնիկական բնութագրում փոփոխություններ կատարելու մասին:

2. Պատվիրատու Երքաղլույս ՓԲ Ընկերության կարիքների համար, ՀՀ ֆինանսների նախարարության գնումների հայտարարության վեբ-կայքում 12.05.2021թ.-ին հրապարակվել է լուսատեխնիկական ապրանքների մատակարարման համար ԵՔԼ-Գ2,ԱՊՁԲ-21/15 ծածկագրով գնանշման հայտարարությունը և հրավերը, ըստ որի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 19.05.2021 թ.-ի, ժամը 11.00-ն:

3. Պատվիրատու Երքաղլույս ՓԲ Ընկերությունը վերոհշյալ չափաբաժնի համար ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը, այն է՝

- Օպտիկական բլոկի արտաքին տեսքը կլորավուն,

- Հզորությունը 800 վատտ, թույլատրելի շեղումը + - 5 %,

- լույսի փունջը հեռահար, լույսի ցրման անկյունը առավելագույնը 60 աստիճան,

- սնող լարումը 220Վ, + - 10 %,

- հաճախականությունը 50 Հg, + - 5 Հg ,

- արտաքին ազդեցության պաշտպանվածության գործակիցը առնվազն IP 65,

- գունային ջերմաստիճանը 6500 Կելվին,

- ոչ պակաս 64000 լյումեն,

- էլեկտրական սնուցման բլոկը 2 հատ 400վտ հզորության դրայվերով, դրայվերները առանձին և միաժամանակ միացնելու հնարավորությունով,

- օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է առնվազն 600 հատ լուսադիոդներից, լուսաանդրադարձնող հատվածով,

- օպտիկական բլոկը պետք է պաշտպանված լինի թրծված ապակիով կամ կարբոնատով,

- իրանը մետաղյա, իրանի առավելագույն երկարությունը 530մմ, առավելագույն, լայնությունը 530 մմ, առավելագույն բարձրությունը 530մմ,

- առավելագույն քաշը 10 կգ,

- աշխատանքը շրջակա միջավայրի առնվազն -40-ից +40 ջերմաստիճանի պայմաններում,

- առնվազն 25000 ժամ աշխատանքային ռեսուրսով,

- առնվազն 2 տարի երաշխիքային ժամկետ,

- չօգտագործված, առնվազն 2020թ-ի արտադրության,

- ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:

3.1 Պաավիրտու՝ Երքաղլույս ՓԲ Ընկերության կանոնադրական խնդիրների և նպատակային շահագործման համար Լուսարձակ ԼԵԴ 800 վտ, հեռահար լույսով ապրանքի տեխնիկական բնութագրին ներկայացվող պարտադիր պահանջների նկատմամբ հիմնավորումները, մասնավորապես.

- Նախատեսում է իրականացնել արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքներ ցանցում առկա կլորավուն արտաքին տեսքով մետաղահալոգենային լուսարձակները փոխարինելով նմանատիպ կլորավուն արտաքին տեսքով արդիական և էներգախնայող ԼԵԴ լուսարձակներով, հաշվի առնելու Երևան քաղաքի արտաքին տեսքին համահունչ և միանման լինելու համգամանքը,

- Ձեռքբերվելիք լուսարձակների տեխնիկական բնութագրերով սահմանվել են 10 կգ առավելագույն քաշեր և երկարության 530մմ, լայնության 530մմ, բարձրության 530մմ առավելագույն չափսեր ելնելով դրանց անվտանգության, մոնտաժման և հետագա շահագործման հնարավորություններից, քանի որ լուսարձակները նախատեսվում է տեղադրել 11 մ և ավելի բարձրության սյուների վրա առկա համապատասխան չափերի բարձակների վրա ապամոնտաժելով մետաղահալոգեն լուսարձակները, իսկ գերազանցող քաշի և չափսերի դեպքում հնարավոր չի լինելու իրականացնել լուսարձակների մոնտաժումը՝ ապահովելով անհրաժեշտ անվտանգությունը և հետագա շահագործումը: Նմանատիպ լուսարձակներն օգտագործում է նաև շարժական եղանակներով, ուստի 10 կգ-ից ավել քաշի դեպքում շարժական կիրառումը հնարավոր չի լինելու:

- Տեխնիկական բնութագրով սահմանվել է կլորավուն արտաքին տեսք, մեկ մատրիցա լուսաանդրադարձնող հատվածով, քանի որ լուսարձակի միայն նմանատիպ կառուցվածքով է հնարավոր ստանալ անհրաժեշտ լույսի փունջը և հստակ հատվածների վրա ապահովել անհրաժեշտ հեռահար լուսավորվածության մակարդակ, ինչը ներկայում ապահովվում է նմանատիպ կառուցվածք ունեցող մետաղահալոգեն լուսարձակներով:

4. Բողոքաբեր Կատյա Նազարեթյան անհատ ձեռնարկատերի բողոքի պահանջը, մասնավորապես.

- Մեծացնել 800 Վտ լուսարձակի քաշը և արտաքին չափերը,

- Արտաքին տեսքի ձևը, մասնավորապես կլորավուն լինելու հիմնավորում և մատրիցաների ու լուսադիոդների քանակական սահմանափակումների վերացում:

Բաղոքաբերի պահանջն ամբողջովին անհիմն է և ենթակա մերժման, այդ թվում նաև տեխնիկական հետևյալ պատճառաբանությամբ

1. Բողոքաբերի այն պնդումը, թե 800վտ լուսարձակը երկու անգամ մեծ է 400 վտ լուսարձակից, հետևաբար տեխնիկական բնութագրերով սահմանված բոլոր չափորոշիչները պետք է սահմանել այդ համամասնությամբ, գտնում ենք որ այս պնդումն անհիմն է, քանի որ լուսարձակի հզորությունն ապահովվում են էլեկտրական սնման բլոկը՝ դրայվերը և համապատասխան քանակի և հզորության լուսադիոդները, որոնց փաստացի հզորությունից էլ կախված է լուսարձակի հզորությունը, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված 2 հատ 400վտ դրայվերը հնարավորություն է ընձեռնելու փաստացի մեկ հատի միացման պարագայում ստանալ 400 վատ հզորություն իսկ երկուսը միաժամանակ միացնելու դեպքում ստանալ 800վտ հզորություն, հնարավորություն տալով կիրառել խնայողական ռեժիմ և ապահովել էլեկտրաէներգիայի խնայողություն: Այս

պարագայում չափսերի փոփոխության հարց չի առաջանում, իսկ երկրորդ դրայվերը չափսերի մեծացման վրա չի կարող ազդել:

2. Մյուս պնդումը, որ եթե 400վտ հզորության լուսարձակի մատրիցան պետք է հավաքված լինի 350 հատ լուսադիոդներից և այդ դեպքում 800վտ հզորության լուսարձակի մեկ մատրիցայի վրա 600 հատ լուսադիոդներ հնարավոր չէ հավաքել նույնպես անհիմն է, քանի որ նախևառաջ մատրիցան իրենից ներկայացնում է որոշակի չափերով պլատա, որի վրա հավաքվում են լուսադիոդները, իսկ տեխնիկական բնութագրերով սահմանված չափերով մատրիցաների վրա հնարավոր է հավաքել շատ ավելի լուսադիոդներ: Հրավերի տեխնիկական բևութագրով սահմանվել է, որ 400վտ լուսարձակի մատրիցան պետք է հավաքված լինի առնվազն 350 հատ լուսադիոդներից, իսկ 800վտ լուսարձակի մատրիցան պետք է հավաքված լինի առնվազն 600 հատ լուսադիոդներից, իսկ առնվազն նշանակում է դրանից ավել ցանկացած քանակ կբավարարի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին: Լուսադիոդների նվազագույն քանակ սահմանվել է ելնելով Երքաղլույս ՓԲԸ աշխատանքային փորձից և անհրաժեշտությունից, քանի որ հնարավորինս շատ լուսադիոդների առկայության դեպքում, մեկ միավոր լուսադիոդի հզորությունը ավելի քիչ է լինում և եթե հետագա աշխատանքի ժամանակ լուսադիոդը խափանվում է, ապա լուսարձակի լուսատվությունը շատ չի շեղվում:

3. Այն պնդումը, թե հրավերի տեխնիկական բնութագրով չափերն ավելի շատ համապատասխանում են քառակուսի տեսք ունեցող լուսարձակներին, առնվազն անհասկանալի է, չափս հասկացողությունը վերագրելի է ցանկացած երկրաչափական մարմնին, հետևաբար կլորավուն կամ այլ կառուցվածք և տեսք ունեցող մարմինները ևս ունեն համապատասխան վերաբերելի ու թույլատրելի չափեր:

4. Նշված ընթացակարգի հայտերի բացման վերջնաժամկետում հայտ ներկայացրել է միայն «Լայթինգ» ՍՊ Ընկերությունը, և որ Բողոքաբերի կողմից առհասարակ որևէ ձևով, կարգով և ժամկետներում հայտ չի ներկայացվել:

4.1 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենսդրության 50 հոդվածի 10-րդ մասը, այն է՝

Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնահիցած

անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից.

29 հոդվածի 1-4 կետերը, այն է՝

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

2. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, իսկ փակ մրցույթի դեպքում հարցման և պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին:

3. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

4. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ փակ մրցույթի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած մասնակիցներին:հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՛ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:

4.2 ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32 կետի 22-րդ ենթակետը, այն է՝ Հրավերով նախատեսվում է, նաև որ հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների

տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքներն իրենց ամբողջության մեջ, համադրելով դրանք միմյանց հետ ու վերլուծելով, գնահատելով և հետազոտելով Բողոքաբերի ներկայացված տեղեկություններն ու փաստարկները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա, կարելի է հանգել համոզման առ այն, որ Բողոքաբերի դիրքորոշումն այն մասին, որ հրավերի 1-ին չափաբաժնի Լուսարձակ ԼԵԴ 800 վտ, հեռահար լույսով ապրանքի տեխնիկական բնութագրում փոփոխություններ կատարելու մասին, համարում ենք անհիմն և իմաստազուրկ, քանի որ Բողոքաբերը չի հանդիսանում խնդրո ընթացակարգի մասնակից և հետևաբար օրենսդրությամբ նախատեսված կարգով բողոք ներկայացնող սուբյեկտ, ինչպես նաև սահմանված կարգով և ժամկետներում Պատվիրատուին չի ներկայացրել պահանջ՝ համապատասխան ապրանքի տեխնիկական բնութագրում և հրավերում պարզաբանում ու փոփոխություն կատարելու համար, հետևաբար Բողոքաբերի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից լուսատեխնիկական ապրանքների ձեռքբերման նպատակով 12.05.2021թ.-ին հայտարարվել է «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 1-ին չափաբաժնով սահմանվել է հետևյալը՝

Լուսարձակ LED 800 վատտ հեռահար լույսով.

- Օպտիկական բլոկի արտաքին տեսքը կլորավուն,
- Հզորությունը 800 վատտ, թույլատրելի շեղումը + - 5 %,
- լույսի փունջը հեռահար, լույսի ցրման անկյունը առավելագույնը 60 աստիճան,
- սնող լարումը 220Վ, + - 10 %,

- հաճախականությունը 50 Հg, + - 5 Հg ,

- արտաքին ազդեցության պաշտպանվածության գործակիցը առնվազն IP 65,

- գունային ջերմաստիճանը 6500 Կելվին,

- ոչ պակաս 64000 լյումեն,

- էլեկտրական սնուցման բլոկը 2 հատ 400վտ հզորության դրայվերով, դրայվերները առանձին և միաժամանակ միացնելու հնարավորությունով,

- օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է առնվազն 600 հատ լուսադիոդներից, լուսաանդրադարձնող հատվածով,

- օպտիկական բլոկը պետք է պաշտպանված լինի թրծված ապակիով կամ կարբոնատով,

- իրանը մետաղյա, իրանի առավելագույն երկարությունը 530մմ, առավելագույն, լայնությունը 530 մմ, առավելագույն բարձրությունը 530մմ,

- առավելագույն քաշը 10 կգ,

- աշխատանքը շրջակա միջավայրի առնվազն -40-ից +40 ջերմաստիճանի պայմաններում,

- առնվազն 25000 ժամ աշխատանքային ռեսուրսով,

- առնվազն 2 տարի երաշխիքային ժամկետ,

- չօգտագործված, առնվազն 2020թ-ի արտադրության,

- ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:

Հավելված 1-ի 2-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալը՝

Լուսարձակ LED 400 վատտ հեռահար լույսով.

- Օպտիկական բլոկի արտաքին տեսքը կլորավուն,

- Հզորությունը 400 վատտ, թույլատրելի շեղումը + - 5 %,

- լույսի փունջը հեռահար, լույսի ցրման անկյունը առավելագույնը 60 աստիճան,

- սնող լարումը 220Վ, + - 10 %,

- հաճախականությունը 50 Հg, + - 5 Հg ,

- արտաքին ազդեցության պաշտպանվածության գործակիցը առնվազն IP 65,

- գունային ջերմաստիճանը 6500 Կելվին,

- ոչ պակաս 32000 լյումեն,

- էլեկտրական սնուցման բլոկը 1 հատ 400վտ հզորության դրայվերով,

- օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է առնվազն 350 հատ լուսադիոդներից, լուսաանդրադարձնող հատվածով,

- օպտիկական բլոկը պետք է պաշտպանված լինի թրծված ապակիով կամ կարբոնատով,

- իրանը մետաղյա, իրանի առավելագույն երկարությունը 400մմ, առավելագույն, լայնությունը 400մմ, առավելագույն բարձրությունը 400մմ,

- առավելագույն քաշը 10 կգ,

- աշխատանքը շրջակա միջավայրի առնվազն -40-ից +40 ջերմաստիճանի պայմաններում,

- առնվազն 25000 ժամ աշխատանքային ռեսուրսով,

- առնվազն 2 տարի երաշխիքային ժամկետ,

- չօգտագործված, առնվազն 2020թ-ի արտադրության,

- ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Կատյա Նազարեթյան» Ա/Ձ-ի կողմից 17.05.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի

կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների

համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից լուսատեխնիկական ձեռքբերման նպատակով 12.05.2021թ.-ին հայտարարված «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 1-ին չափաբաժնով սահմանվել է հետևյալը՝

Լուսարձակ LED 800 վատտ հեռահար լույսով.

- Օպտիկական բլոկի արտաքին տեսքը կլորավուն,
- Հզորությունը 800 վատտ, թույլատրելի շեղումը + - 5 %,
- լույսի փունջը հեռահար, լույսի ցրման անկյունը առավելագույնը 60 աստիճան,
- սնող լարումը 220Վ, + - 10 %,
- հաճախականությունը 50 Հg, + - 5 Հg ,
- արտաքին ազդեցության պաշտպանվածության գործակիցը առնվազն IP 65,
- գունային ջերմաստիճանը 6500 Կելվին,
- ոչ պակաս 64000 լյումեն,
- էլեկտրական սնուցման բլոկը 2 հատ 400վտ հզորության դրայվերով, դրայվերները առանձին և միաժամանակ միացնելու հնարավորությունով,
- օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է առնվազն 600 հատ լուսադիոդներից, լուսաանդրադարձնող հատվածով,
- օպտիկական բլոկը պետք է պաշտպանված լինի թրծված ապակիով կամ կարբոնատով,
- իրանը մետաղյա, իրանի առավելագույն երկարությունը 530մմ, առավելագույն, լայնությունը 530 մմ, առավելագույն բարձրությունը 530մմ,
- առավելագույն քաշը 10 կգ,
- աշխատանքը շրջակա միջավայրի առնվազն -40-ից +40 ջերմաստիճանի պայմաններում,
- առնվազն 25000 ժամ աշխատանքային ռեսուրսով,

- առնվազն 2 տարի երաշխիքային ժամկետ,

- չօգտագործված, առնվազն 2020թ-ի արտադրության,

- ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:

Հավելված 1-ի 2-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալը՝

Լուսարձակ LED 400 վատտ հեռահար լույսով.

- Օպտիկական բլոկի արտաքին տեսքը կլորավուն,

- Հզորությունը 400 վատտ, թույլատրելի շեղումը + - 5 %,

- լույսի փունջը հեռահար, լույսի ցրման անկյունը առավելագույնը 60 աստիճան,

- սնող լարումը 220Վ, + - 10 %,

- հաճախականությունը 50 Հg, + - 5 Հg ,

- արտաքին ազդեցության պաշտպանվածության գործակիցը առնվազն IP 65,

- գունային ջերմաստիճանը 6500 Կելվին,

- ոչ պակաս 32000 լյումեն,

- էլեկտրական սնուցման բլոկը 1 հատ 400վտ հզորության դրայվերով,

- օպտիկական բլոկը պետք է բաղկացած լինի մեկ մատրիցայից, որը հավաքված է առնվազն 350 հատ լուսադիոդներից, լուսաանդրադարձնող հատվածով,

- օպտիկական բլոկը պետք է պաշտպանված լինի թրծված ապակիով կամ կարբոնատով,

- իրանը մետաղյա, իրանի առավելագույն երկարությունը 400մմ, առավելագույն, լայնությունը 400մմ, առավելագույն բարձրությունը 400մմ,

- առավելագույն քաշը 10 կգ,

- աշխատանքը շրջակա միջավայրի առնվազն -40-ից +40 ջերմաստիճանի պայմաններում,

- առնվազն 25000 ժամ աշխատանքային ռեսուրսով,

- առնվազն 2 տարի երաշխիքային ժամկետ,

- չօգտագործված, առնվազն 2020թ-ի արտադրության,

- ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի

բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման/հերքման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Ամբողջ վերոգրյալների ու սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Կատյա Նազարեթյան» Ա/Ձ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտման առումով, անհիմն են, իսկ Ընթացակարգի պահանջները հիմնավոր են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերն ենթակա չէ փոփոխման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Կատյա Նազարեթյան» Ա/Ձ-ի կողմից 17.05.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/40 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**